Պայմանագիր N

Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան... հունվար 2019թ.

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի գործելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից, այսուհետ «Ոստիկանություն»՝ մի կողմից և << Արշալույս >> առողջարարական ճամբար >> ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Ռոբերտ Պոլեյանի, այսուհետ <<Արշալույս>> Ա/Ճ>> ՝ մյուս կողմից, ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշումով հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով սահմանվում է 2019 թվականին «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 03. բաժնի 01 խմբի 01 դասի <<10. Ոստիկանության» ոլորտի քաղաքականության մշակում կառավարում կենտրոնացված միջոցառումների մոնիտորինգի և վերահսկողության իրականացում>> ծրագրով պետական աջակցության տրամադրման կարգը, որի շրջանակներում <<Արշալույս>> Ա/Ճ>> իրականացնում է կանոնադրությամբ սահմանված գործունեությունը:

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1. <<Արշալույս>> Ա/Ճ>> -ը պարտավոր է .

2.1.1. Ապահովել ոստիկանության ծառայողների, ոստիկանության քաղաքացիական ծառայողների, ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների երեխաների հանգստի կազմակերպումը, մանկավարժական գործունեության կազմակերպումը և

իրականացումը, մանկավարժական գործունեությունը՝ երեխայի ֆիզիկական և հոգեբանական առողջության ամրապնդման ոլորտում, կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային, նպատակներին, կարգին և պայմաններին համապատասխան: Ճամբարը կազմակերպել չորս հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը 14օր, յուրաքանչյուր հերթափոխում՝ երեխաների միջին թիվը՝ 107 երեխա: Ընդհանուր ուղեգրվող երեխաների թիվը 428 երեխա, մեկ ուղեգրի նվազագույն շահավետ գինը 57736.3 դրամ, տարեկան ընդամենը՝ 24.711.100 դրամ:

2.1.2. «Ոստիկանությանը» ներկայացնել կատարված ծախսերի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ ՀՀ ֆինանսների 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով հաստատված կագին և ժամկետներին կատարել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշման պահանջները՝ հաստատված կարգով և ժամկետներում, «Ոստիկանության» հետ կնքել հանձման – ընդունման ակտեր՝ ՀՀ ֆինանսների 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան:

2.2. <<Արշալույս>> Ա/Ճ>>-ն իրավունք ունի.

2.2.1. Սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ժամկետում և կարգով «Ոստիկանություն»-ից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը՝ համաձայն հաստատված ժամանակացույցի:

2.3. «Ոստիկանություն»-ը պարտավոր է.

2.3.1.Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել <<Արշալույս>> Ա/Ճ>> -ին:

2.4. «Ոստիկանություն»-ը իրավունք ունի

2.4.1. Պահանջել <<Արշալույս>> Ա/Ճ>> -ից սույն պայմանագրի

2.1.2 ենթակետում նշված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

3. Վճարումների կարգը

3.1 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 24.711.100 (քսանչորս միլիոն յոթ հարյուր տասնմեկ հազար հարյուր) դրամ:

3.2 «Ոստիկանություն»-ը վճարումներն իրականացնում է համամասնորեն՝ ամսական կտրվածքով, ոչ ուշ քան հաջորդ ամսվա 5 - ը:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկ օրինակ:

<<Ոստիկանություն>>
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան.Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

_____ Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
Կ.Տ

«Արշալույս Ա/Ճ»
ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզ
գ.Արզական /Աղվերան/
ԱՄ 9000 ՀՀ ֆին. Նախ.
Գործառնական վարչություն
Հ/Հ 9000 18005083
ՀՎՀՀ 02807279

_____ Ռ.Պոլեյան
Արշալույս Ա/Ճ» տնօրեն
Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀՀ ֆինանսների – էկոնոմիկայի նախարարի
«24»«դեկտեմբերի»2007 թվականի N 899-Ն հրամանի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝ <<Արշալույս>> ԱՁ>> ՊՈԱԿ

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստոր AM 9000 ՀՀ ֆին նախ .Գործառնական վարչություն

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը900018005083

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
03	01	01	10	105019

Ծրագրի անվանումը Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում՝ կառավարում՝ կենտրոնացված միջոցառումների՝ մոնիտորինգի – վերահսկողության իրականացում

(հազ.դրամ)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	15
Ծառայության մատուցում	4511	1100.0	2080.0	2942.2	4940.0	6940.0	9272.0	15772.0	20000.0	21171.8	23021.0	23870.0	24711.1	24711.1
Ընդամենը		1100.0	2080.0	2942.2	4940.0	6940.0	9272.0	15772.0	20000.0	21171.8	23021.0	23870.0	24711.1	24711.1

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,

ոստիկանության գնդապետ Մովսիսյան

«15» «01» «2019» թ.

Կնիքի տեղը

<< ԱՐՇԱԼՈՒՅՍ>> ԱՁ>> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ **Ռ.Պոլեյան**
(ստորագրություն)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ **Զ.Հակոբյան**
(ստորագրություն)

«------» «----------» «2019»թ.

Կնիքի տեղը